Գ.

Աղուոր մ'ի գընալ տեսայ, կանչեցի թէ՝ Կարմի՛ր երես:
Դարձաւ ու ճուղապ երետ՝ Ես աղուոր, դուն ո՞ւր փախել ես.
Աստուած ինձ երես երետ, քեզ աչեր, դու կանգնէ՛ ու տե՛ս.
Ինձ ըռընտութիւն երետ, քեզ կըրակ, որ դու զքեզ երես:

ՔՍԱՆԵԻՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ
ՀԱՅՐԵՆԻՔ ՍԻՐՈՅ ՎԵՐԱՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ԱՇԸՔՆԵՐՈՒՆ

Ա.

Երբոր ես պըզտիկ էի, կանչէին ինձ ոսկի տըղայ.
Սեծցայ սիրու տէր եղայ, երեսիս գոյնըն կու գնայ:
Մանկտի՛ք, ձեր արե՛ւն ասեմ, որ սիրուն քարըն չըդիմնայ.
Սիրուն քար 'ւ երկած պիտի, պողպըտէ դըռնակն ի վերայ:

Բ.

Ա՛յ իմ ճերմակ ծոց բազայ, ճերմակ ծոց ու ծինն ի վերայ,
Քո բուն ի դիժար քարին, արծըւին ահիկն ի վերայ.
Երթամ աղաչեմ զԱստուած, որ արծիւըն շուտ վերանայ,
Ճերմակ ծոցն ի յիս դառնայ, չարն երթայ շըլեցն ի վերայ:

Գ.

Լուսի՞ն, դու լուսով կացի՛ր, թէ կենաս պահիկ մի հուսայ.
Երկու խօսք գանգատ ունիմ, զայն ասեմ լուք այլվի զընա՛.
Գընա՛ 'ւ իմ եարուն ասա՛ թէ՝ Նըստեր երդիքն ու կուլայ,
Կուլայ 'ւ ողորմուկ կուլայ, աչերուն արիւն կու ցօղայ:

Դ.

Երբ ես ի Թօխաթ մըտայ, բարակ մէջք կօզալ մի տեսայ,
Ճամբեկս մահանայ արի, կանչեցի տարպեկ մի նորա.
..... աչօք երաց թէ՝ Գընա՛,
Գընա՛ 'ւ իրիկունն եկո՛, ոտքն ի խաղ, որ մարդ չիմանայ,
Հանչանք գիրկուծոց անենք, պագ հազար, մինչ որ լուսանայ:

Ե.

Եկո՛, զքեզ ի ծոցս առնում, տեղ շինեմ կըրծոցըս վերայ.
Ծոցըս քեզ սեղան քաշեմ, ծիծըս բարձ, երեսդ ի վերայ.
Կոճկիկըս թուլկեկ կոճկեմ որ հոգիդ ի ծոցիկս ելնայ: